ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ. ՓԵՏՐՈՒԱՐ 15, 1895 · ԹԻՒ 3 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 90

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St., New York, N. Y. Vol. V, 1895

ԲԱՐԵԿԱՄ ՀԱՅՈՑ

ՄԵԾ ԾԵՐՈՒՆԴԻՆ

ԿԼԱՏՍԹՈՆ

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Փրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ա. Թրքահայոց սպառումն
Բ. Սասնոյ Հայք իսկապէս ապստամբած չէին
Գ. Հայաստանի աշխարհագրական դժբաղդ դիրքն քաղաքական տեսակէտով
Դ. Սուլթան Համիտ կուրացած
Ե. Հայք կիսամնեայ

Յաւելուած ի սոյն տեղեկագիրն.— Առաջին Նամակ Եւրոպական Թղթակցի ի Հայաստանէ.— Նամակ Շիքակոյէն.— Նամակ ի Ֆիլատելֆիոյ — Փրովիտէնսի Հայերն և Միութեան խնդիրն.— Լինի Հայ Գաղութք և Կեդրոնական Յանձնախմբի Խնդիրն.— Նամակ ի Պուլկարիոյ.— Հարստահարութիւնք Բալուայ կողմերն.— Այլ և Այլք.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ա.

ՍՊԱՌՈՒՄՆ ԹՐՔԱՀԱՅՈՑ

Ստուգագոյն տեղեկագրութիւնք կը հասնին հետ զհետէ և լոյս աշխարհ կը բերեն սոսկալի տեսարաններն որք տեղի ունեցած են անցեալ ամառ ի Սասուն:

Սո՛ սկսամբ կը տեսնեմք սոյն իրողութիւնն թէ մեր կորուստն աւելի մեծ է քան ի սկզբան կը կարծէինք: Երկու կամ երեք կամ հինգ հազար չեն կորած այլ առնուազն 16,000, որպէս կը ծանուցանէ սոյն տեղեկագիրն զոր հրատարակեցինք «Հայքի» 2 թուով: Եթէ այդ թուոյ վերայ աւելցունեմք 1894 թուականին եղած ուրիշ կորուստներն, բանտի, չարչարանաց, չուառ գաղթականութեան և աքսորի երեսէն, 30 կամ 40 հազարի մօտ թիւ մի կունենամք:

Թէպէտ Թուրքիոյ մէջ սոյն տեղեկագիր չկայ ոչ մահու, ոչ ծննդեան, և ոչ ոև է բանի, բայց ուրիշ երկիր հետ բաղդատութիւններ անվրդով կարելի է մերձաւորապէս ենթադրել թէ Օսմանցւոց իշխանութեան չարաչուք հովանւոյն տակ ապրողներու 1,000էն քանի՛ն կը մեռնին ամեն տարի, միջին հաշուով: յԱնգլիա և ի Ֆրանսա 1,000էն 20 կամ 22, ի Գերմանիա՝ 27, յԻտալիա՝ 30, յԱւստրիա՝ 31, ի Ռուսիա՝ 36, ի Հունգարիա՝ 38 էր միջին թիւն վերջերս: Տաճկաստանի համար չի կրնար լինել նուազ քան 40: Եւ որովհետեւ 1894էն ծաղիկն, հարսանիքն, հընտախտ ու սղութիւնն տիրեցին այլևայլ կողմերն այդ թշուառ երկրին, միջին հաշուին դուցէ 45 կամ 50 իսկ դնել չափազանց չլինի, որով կունենամք 80 կամ 100 հազար մահ 2 միլիոն Թրքահայոց մէջէն: 10 հազարի մօտ գաղթականք գնացին Ռուսաց Կովկաս և այլ տեղիր, և 16 հազարի մօտ անձինք ջարդուեցան ի Սասուն, որով մեր կորուստն կը լինի մէկ տարուան միջոցին իբր 125,000:

Ի՞նչ մուտք ունի Թրքահայն այդ ահագին ելից դէմ ի կշիռ դնելու: Եւրոպական երկրաց մէջ իւրաքանչիւր ամոլից կամ ամուսնացեալ զոյգերու զաւակունք, միջին հաշուով 3 կամ 4 է, հազիւ ուրեք կատարակ մ'աւելի քան 4: Հայոց համար դնենք 5, և մոռնանք յաւելուլ թէ վերջին տարիներու անտեսական տագնապն և նեղութիւնք, ապագայի անստուգութիւնք, երիտասարդաց յարաճուն պանդխտութիւնն և արագ ծաւալող աղքատութիւնն շատ իջեցուցած է ի հարկէ մեր ազգի մէջ ամուսնութեանց թիւն ինչպէս նաև սերնդագործութիւնն: Հաւանական չէ որ վերջին 5 տարիներու ծննդոց վիճակագրութիւնն, եթէ կարելի լինէր, տարին 30 առ հազար ծնունդ ցուցնէր: Ուրեմն մեր վերի տարեկան կորուստի հազիւ կէսն կը դարմանուի ամ ըստ ամէ: Թրքահայոցմէ այժմ տարին իբր 50,000 մարդ կը պակսի, և այս ընթացքով շատ տարի

պէտք չէ անոնք անկարեւոր փոքրամաս-թեան իջեցունելու համար։

Բ

ՍԱՍՈՒՆ ԻՍԿԱՊԷՍ ԱՊՍՏԱՄԲԱԾ ՉԷՐ

Նորագոյն տեղեկագիրն որ եւրոպական Թղթակից մի յղեր է և որոյ մի քանի մասերն թարգմանուած կը գտնուին «Հայքի» այս թուոյն մէջ, կատարելապէս համաձայն է նախորդին հետ այն կարեւոր կէտի վերայ թէ Սասնոյ Հայք ապստամբած չէին։ Թղթակիցն ամենայն պարզութեամբ կը պատմէ թէ Հայք Սասնոյ արօտներուն վերայ կարածէին իրենց հօտեր, առժամանակայ տներու մէջ բնակելով, և ահա քիւրդ աւազակներ յարձակեցին նոցա եզներուն։ Հայեր, բնականապէս աւազակաց ետեւէ գնացին իրենց հօտերն փրկելու, և տեղի ունեցաւ կռիւ մի, յորում երկու կամ երեք հոգի սպաննուեցան երկուստեք։ Այս Չէ և չէ ամենեւին ապստամբութիւն։ Այսպիսի դէպքեր շարունակ կը պատահին։ Եւ ինչպէս Թղթակիցն ճշմարտիւ դիտել կուտայ, ամեն բան կը վերջանայր այդ աննշան ընդհարմամբ եթէ կառավարութիւնն մէջ չի մտնէր Քրդաց թեր ելնելու և Հայոց արարքըն իբր ապստամբութիւն ծանուցանել ի Կ. Պոլիս, և եթէ Սուլթանն ալ եղեռնային աճապարանօք հրաման չտար որ ջախջախեն Հայերն ծայրագոյն խստութեամբ։ Մարդ կը քստմնի երբ կը մտածէ թէ կանոնաւոր բանակ մի ինկած է հովիւ և խաղաղ ժողովրդի մի ետեւէն և սուրբ կնիկներ ու անմեղ մանուկներ բըրէ ի բըրէ հալածելով պղծեր ջարդեր ու յօշոտեր է գազանօրէն։ Եւ այս տեւեր է իբր մէկ ամիս։

Թուրք կառավարութիւնն իւր այս ճիւաղային ոճրագործութեան համար պէտք է կրէ արժանաւոր պատիժն։ Թեթեւագոյն պատիժն է Հայաստանի ինքնօրէն հռչակումն Բ. Դրան հանդէպ, իսկ լիուլի պատիժն է Թուրք կառավարութեան ջընջումն աշխարհի երեսէն։ Ամեն Հայրենասէր, ի՞նչ կ'ասեմ, ամեն գոնէ արդարասէր Հայ պարտի իւր բաժին կատարել այս պատժոյ գոնէ թեթեւագունին գործադրութեան համար։

Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԺԲԱՂԴ ԴԻՐՔՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ

Սասնոյ ջարդն Պուլկարականին պէս արագ և յանկարծ կատարուած չէ· այլ տեւած է իբր ամիս մի։ Ջարդէն առաջ ալ շաբաթներով նախանշաններ տեսնուած են թրքական չարադէտ նպատակին, և զօրաց համախմբումն պարզած է այդ նպատակ։ Եւ սակայն Եւրոպա և արտասահմանի Հայութիւնն չիմացաւ ջարդի գոյժն բայց եթէ Սասնոյ չքացումէն աւելի քան երկու ամիս յետոյ։ Այս կէտ ծանր խորհրդածութիւն կը պահանջէ։ Թուրքն կարող է դեռ շատ Հայ ջարդել առանց որ Եւրոպա կարենայ թեւէն բռնել, եթէ մեք Հայերս աւելի կատարեալ կազմաւորութեամբ մի հաղորդակցութեան ապահով միջոցներ չստեղծեմք Հայաստանի և Եւրոպիոյ միջև—Հայաստանի մէջ գործողներուն և Եւրոպայի մէջ խօսողներուն միջեւ։ Զարհուրելով միայն կրնայ երեւակայել մարդ Սասունցւոց վիճակն երբ նոքա ոգի ի բռին դէմ կը դնէին բանակին և յուսահատ ձեռքեր յերկինս վերցուցած օգնութի՛ւն կը հայցէին— և սակայն դըրսէն ո՛չ զինու և ո՛չ դիւանագիտական օգնութիւն հասաւ՝ գոնէ ըստ մասին փրկելու համար այդ քաջ ու հիանալի ժողովուրդն։

Թէ՛ յեղափոխական և թէ դիւանագիտական մեր գործիչք կամ առաջնորդք կրնան Հայաստանի չքացումն տեսնել եթէ միմեանց մէջ մտերիմ հաղորդակցութիւն չհաստատեն այլ միայն ամեն մէկն ինքն իրեն շարժի ու պոռայ և կարծէ թէ այդ է իւր պարտքի բաժին։ Խնդիրն այն չէ որ իւրաքանչիւր ոք բան մի արած լինելու պարծանքն ունենայ՝ թէպէտ հայրենիք ազատի թէպէտ ոչ։ Ուրեմն Ամերիկայի Հայերն շատ իրաւամբ շարժած են այս օրերս խնդրելու համար մեր եւրոպիոյ գործիչներէն որ ի Լոնտոն ի մի վայր գան և խորհրդակցին․․․։

Դ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԿՈՒՐԱՑԱԾ

Համիտ ամեն քար կը շրջէ ճար մի գտնելու համար։ Տիմար Ազարեանի թրքամէտ ընթացքէն քաջալերուած դիմեց

Ս. Պապին, որ խորագիտագոյնն է դիւանագիտաց և կրնայ հարիւր Համիտ խաղցունել մատի վերայ։ Իսլամաց խալիֆն խնդրեց Հռովմէական եկեղեցւոյ միապետին միջնորդութիւնն Հայկ. Խնդրոյն նըկատմամբ։ Այս դիմումի շաղոքորթ աղաչանք մ'էր որպէս զի Ս. Պապն թեր ելնէ Իսլամ աշխարհի պետին։ Խաբուեցաւ Համիտ։ Քահանայապետն պատասխանեց թէ չէր կրնար միջնորդել այլ խորհուրդ կուտայ որ այն ամեն գաւառաց մէջ ուր Հայեր բազմաթիւ են, քրիստոնեայ կառավարիչ կարգէ։

Համիտ սրամիտ է կ'ասեն, բայց քըրիստոնէից դէմ մոլեռանդ ատելութեամբ կուրացած՝ չի տեսներ ելի միակ ճանապարհն որ լայն բացուած է իր առջեւ։ Ամեն բան պէտք է համոզած լինէր զինքըն թէ այսուհետեւ անհնար է Թուրքիոյ Հայերն խաղաղել։ Նոքա, թէպէտ գիտնան թէ պիտի ջնջուին չարաչար, պիտի չդադարին յարաճուն կատաղութեամբ և մեծագոյն փորձառութեամբ դիմադրելէ Թուրք կառավարութեան— և նոցա օրինակին պիտի հետեւին Մակեդոնիա և Արաբիա և այլք։ Այժմ բովանդակ պետութեան կը սպառնան փոթորիկք ամեն կողմէ։ Այսմ այնքան լաւ համոզուած է Անգլիա որ կ'ուզէ Հայկ. Խնդրոյն լուծումի մի տալ որքան հնար է Թուրքիոյ նպաստաւոր կերպով. այսինքն զՀայաստան ինքնօրէն Նահանգի վերածելով։ Համիտ զայդ ալէի հասկանար։ Համիտ չի տեսներ սա պարզ ու յայտնի բանն թէ Հայաստան կա՛մ ինքնօրէն պէտք է լինի շուտով և կամ Ռուսիոյ պէտք է կցի։ Հարկ է որ Թրքաց ինքնակալն մտային կուրութեամբ անիծուած լինի յերկնաւորէն՝ չտեսնելու համար թէ այս երկուքին մին անխուսափելի է և թէ ո՛րն է իրեն կայսրութեան նպաստաւորն։

Ե

ՀԱՅՐ ԿԻՍԱՄՍԵԱՑ

Խմբագրութիւնս որոշած է ՀԱՅՐն հրատարակել ամիսն երկու անգամ, մերթ 8 երեսէ մերթ 16 երեսէ բաղկացեալ։

Հայքասիրաց Միութիւնն արդէն երաշխիք մ'էր ՀԱՅՐի գոնէ իբրեւ ամսօրեայ շարունակմանն. այլ լինի հայրենասէր երիտասարդութեան օրինակն անշուշտ կը գտնէ իւր հետեւողներն ի Փրովիտէնս, ի Պոսթըն և այլուր և շուտով Ամերիկայի բաժանորդաց թիւն կը հասնի 400ի։ Այժմ Ամերիկայի բաժանորդաց թիւն իբր 250է։ Եթէ Նիւ Եորք, Ուսաբր, Փրովիտէնս, Պոսթըն, Ֆիլատէլֆիա, Ֆրէզնոյ, Թրոյ այն համեմատութեամբ դրուին որպէս Լին գրուեցաւ, բաժանորդաց թիւն 600 ի կը հասնի յԱմերիկա, և ՀԱՅՐ կը վերածուի շաբաթաթերթի։ ՀԱՅՐի բանիմաց համակրողներ խոստացած են աշխատիլ առ այս յիշեալ գաղթականութեանց մէջ, և խմբագրութիւնս վստահութեամբ ակն ունի նոցա հոգածութեանց յաջող արդեանցն։

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ի ՍՏՈՑԳ ՏԵՂԵԿԱԳԻՐՆ

Հայաստանի մէջ մի քանի օտարականաց կամէն ամենայն խղճմտութեամբ խմբագրուած տեղեկագիրն որոյ թարգմանութիւնն տուինք անցեալ թուով, կը պարունակէ յաւելուած մ'ալ զոր այս անգամ կը հրատարակեմք իբրեւ եղելութիւններ որք ընդհանուր վիճակին ծայրագոյն դըժընդակութիւնն պարգելու կը ծառայեն։

ԱՆԱՄՕԹՈՒԹԻՒՆ։ Ոսաիկան մի ուղարկուած էր ի գիւղն Սուլխան, ի դաշտին Մշոյ, որ բնակիչներն որոյ հանէ մարախի ետեւէն։ Շատք հիւանդութեամբ վատոյժ, և ի չգոյէ կերակրոյ սկարացած էին, բայց նա անողորմաբար վարեց ամենքն դէպ ի դաշտ։ Անանք որ նուազած կ'իյնային, կը մտրակէր։ Երբ դաշտն ելան, ինքզինք մերկացուցանելով յայսկոյս և յայն տատանիլ սկսաւ ի նախատինս կանանց։

Զինուորներ կին մի գտան իւր գիւղէն հեռու և լլկեցին զինքն այնքան որ բոլորովին դալկացաւ և նուազեցաւ։ Գիւղացիք դրին հէք կինն սայլի մի վերայ և Մշոյ կառավարչին տարին։ Անդ գիւղացիք ի փոխարէն իրենց աղերսանաց սատացան առատ յանդիմանութիւն և ետ համբուեցան։ Զարարարք մնացին անպատիժ։ Կառավարող դասուն բարոյականն կարելի է դատել այն իրողութենէն որ երբ

մունետիկն գիւղի մի արդիւնաբերութեան տասանորդն աճուրդի կը հանէ, պարզ ակնարկութիւն մ'ալ գիւղին կանանց նկատմամբ կ'անէ իբրեւ բաղձալի առաւելութեան։

ԲԱՂԻՇՈՑ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆԲ։ Մէկ օրինակ հերիք է իբրև բացատրութիւն։ Հայ վաճառական մի Պարսկաստանի գործակալին կը գրէ և կը հարցնէ թէ հում մետաքսի գինը ի՞նչ է և թէ արդեօք գինն բարձրանալո՞ւ թէ իջնելու կը միտի։ Նամակատան մէջ պաշտօնեայք կը բանան նամակն և կը կանչեն որ գրողն գայ բացատրութիւն տայ իրենց թէ մետաքս ասելով ինչ՞ ասել ուզեր է։ Ի զուր կ'աշխատի դըժբաղդ վաճառականն հաստատել թէ ինքն շատ տարիներէ ի վեր հում մետաքս կը ներածէր և ի Հալէպ կը յղէր. և թէ մետաքս կը նշանակէ «մետաքս։» Ոստիկանութեան կայարանին մէջ կը կալանաւորեն զինքն և աքսորելու սպառնալիք ըմբռնել կուտան մետաքսի վաճառականութիւն անելու յանդգնողին, որ վերջապէս 150 լիրա տալով կ'ազատի։

ՃՄԼԻՋ ՏՈՒՐՔԵՐ։ Այս սովի տարիս շատ գիւղացիներ իրենց խոհարարական կահերն և անկողիններն վաճառելով տուրքի ստակն հայթայթեցին։ Ոստիկան մի տուրք հաւաքել գնաց ի Բերդակ։ Մահամերձ գանակոծեց քրիստոնեայ մի որ լիրա մի տուրքն վճարելու ճար չունէր։ Ապա ողորմելին Թրքէ մի փոխ առաւ մէկ լիրա, նմա գրաւորապէ՝ կանխաւ վճառելով ցորենն ու յարդն զոր պիտի ստանայր երբ ցորենն կալէր։ Երբ ցորենն կալեցաւ, տեսնուեցաւ թէ փոխատուին մէկ լիրային փոխարէն ՏԱՍՆԵՒՄԷԿ ԼԻՐԱ վճարած եղաւ։

Ոմանք տալար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Բէֆիսթը անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՑԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆԷ

Միացեալ Մամլոյ կողմանէ, Լոնտոնէն, յատկապէս ի Հայաստան ուղարկուած թղթակիցն իւր առաջին նամակն յղած է Սասնոյ և առ հասարակ Հայաստանի անցքերուն վերաբերութեամբ։ Այդ երկար նամակի ինչ ինչ կարեւորագոյն մասերն կը ներկայացունեմք մեր յարգոյ ընթերցողաց։

«Հայաստանի լերանց ձիւներուն տակ ինչ գաղտնիք ալ որ ծածկուած լինին, անվիճելի կերպով ստոյգ կ'երեւին թէ գազանային ջարդերու և քստմնելի արհաւրաց պատմութիւնն հիմնապէս ճշմարիտ է։

Սասնոյ կոտորածին անկողմնակալ ճըշմարտութիւնն երբէք չպիտի երեւան ելնէ գուցէ, զի մեռեալներն չեն խօսիր։ Արժանահաւատ աղբիւրներէ ստացուած իրողութիւններն մագելով կրնամք ասել թէ հետեւեալն է դէպքերուն ստոյգ պատմութիւն։— Հայ գիւղացիներ թուով մի քանի հազար, Սասնոյ արօտներուն վերայ կարածէին իրենց հօտեր, Քրդաստանի սահմանագիծն ի վեր։ Նոքա կ'ապրէին առժամանակեայ գիւղերու մէջ, ուր կը մնան միայն արօտի եղանակին, իրենց ձմեռնային բնակութիւնն վարն հովիտներուն մէջ լինելով։ Քրդային մի ցեղ կը պաշտպանէր զիրենք, մասնաւոր յանձնառութեամբ, ընդդէմ արջառի գողերու և քրդային աւազակաց։ Իրենց գիրացած հօտերով ձմեռնային տուներն դիմելու քիչ օրեր մնացած էին երբ քուրդ աւազակներ յափշտակեցին եզներն։ Գիւղացիք և իրենց քիւրդ պաշտպաններն ուժգին ինքնապաշտպանութիւն գործեցին, և պիտի յաջողէին գողերն վանել և եզներն փրկել, այսպէս ամեն բան վերջացած պիտի լինէր, եթէ թուրք կառավարութիւնն մէջ չմտնէր, որով բուն խռովութիւնն սկսաւ։ Պաշտօնեայ մի հեռագրեց Կ. Պոլիս թէ Սասնոյ մէջ յեղափոխութիւն կը տարածուէր, և Արքունիքէն ուղղակի հրաման եկաւ— պատուհասեցէք գիւղացիներն ծայրագոյն խստութեամբ։

Արքունիքն վայրկեան մի մտածած չէր թէ արդեօք զրոյցն ճշմարի՞տ է թէ ոչ,

և պաշտօնեայք ալ չմտածեցին, հրամանն գործադրելէ առաջ, իրողութիւններն քննել երբ զօրքն հասան։ Քուրդ աւազակք միացան կանոնաւոր զօրաց, և նոյն իսկ Հայոց պաշտպան Քրդերն մասնիչ դարձան ու թուրք զօրաց կողմն բռնեցին։ Խեղճ հայ գիւղացիք այսպէս մնացին թուրք կանոնաւոր և քուրդ անկանոն զօրաց ձեռքն։ Այն ատեն ջարդն սկսաւ։ Հայոց համար անյոյս կռիւ մ'էր այն, սակայն և այնպէս նոքա կռուեցան ինչպէս կը կռուին մարդիկ երբ իրենց կանանց և զաւակաց կեանքն ու պատիւն կը պաշտպանեն։ Իրենց տներուն մէջ քաշուեցան ու ամրացան, բայց թնդանօթներուն առջեւ չկրցան դիմանալ. և երբ նոքա սարսափահար կը փախչէին բլրէ ի բլուր, կը մորթուէին անողորմաբար, արք, կանայք և մանկունք։

Սուլթանն այնքան հաճեալ հաւանեցաւ իւր զօրաց այս արարքներուն, որ չընորհակալութիւն և շքանշաններ ու դրօշներ յղեց նոցա։ Կ. Պոլսոյ մէջ Եւրոպացիք կը խորհին թէ թրքական Ցանձնաժողովն այնպիսի անգոհացուցիչ տեղեկագիր մի պիտի բերէ որ Քրիստոնեայ ազգերն պիտի անուանեն Ցանձնաժողով մի, թուրքն ուզէ կամ ոչ, և պիտի քննեն իրաց վիճակն։

Հայ յեղափոխականներն ականջ չպիտի դնեն Սուլթանի խոստումներուն և Հայաստանի մէջ խռովութիւնք պիտի շարունակեն մինչեւ որ Քր. Տէրութիւնք կարգադրութիւն մի անեն։ Կը կարծուի թէ յեղափոխականներն սպառնալեօք շատ դըրամ կը քաշեն, բայց յայտնի չէ թէ դըրամն դոցա գրպաններէն դուրս կը գործածուին թէ ոչ։ Թուրքին այն յայտարարութիւնն թէ կը ջանայ յեղափոխական շարժում մի դադրեցուցնել, ճշմարիտ է։ Տարակոյս չկայ թէ Հայաստանի մէջ ամենէն տագնապալի տեսակէն յեղափոխական շարժում մի կայ, և թուրքն արդարեւ բաղդաւոր պիտի լինի եթէ յաջողի խեղդել զայն։

Իրողութիւն մ'է թէ հայ դաւադիրք ոմանք կարգադրութիւն արած էին սպաննել զՊատ. ԲիկՍ և երկու ուրիշ միսիոնարներ ի Մարսուան, և սճիրն թրքաց վերագրել որպէս զի Ամերիկայի կառավարութիւնն թուրք կառավարութեան դէմ ելնէր և այնպէսով հայկական ինքնօրինութիւնն հնարաւոր գործուէր։ Մարդ պէտք է երկարօրէն խուզարկէ պատմութեան էջերն՝ գտնելու համար քան զայդ աւելի սատանայական ծրագիր։»

ՆԱՄԱԿ ՀԻՒՐԱԿՈՅԻՆ

ՈՒՐԱԽԱՐԱՐ ԼՈՒՐԵՐ

Մեծ. Խմբագիր,

Այսօր կուգամք մի քանի տեղեկութիւններ տալ ՀԱՅՐի միջոցաւ ի գիտութիւն և քաջալերութիւն մեր ցրուեալեղբարց։

Տեղւոյս Հայերն, մէկդի թողլով տարբեր կուսակցութիւնք մեր պատին համար, կազմեցին «Ազգային Միութիւն Հայոց» անուն մարմին մի, որ ամերիկացիք իսկ ճանչցած են իբր կազմակերպեալ մարմին և կամ Հայոց կեդրոն մը, և որ կը գործէ ըստ իւր կարողութեան։ Իւր առաջին գործն եղաւ մէս-միթինկ մ'անել և շատ ալ յաջողակ տրաւ հակառակ տեղւոյս թրքական հիւպատոսի թափած աշխատանաց։ Սա երեւելի բնիկ մ'է և շատ ալ ազդեցիկ և իւր սիրուն համար թերթերէն ոմանք չհրատարակեցին մինչեւ անգամ մեր տուած ծանուցումը և ժողովուրդը կարծեց թէ միթինկը բոլորովին անյաջող պիտի լինէր, և սակայն 3,000 ի մօտ ժողովուրդ ներկայ ունեցանք և նպատակին հասաւ։

Միութիւնս իրեն նպատակ ընտրած է ջանալ, եթէ հնար է, Ամերիկայի բոլոր Հայոց մէջ մի ընդհանուր միութեան կապ և կամ կեդրոն գոյացնել, և առ այս կաշխատի և կը պատրաստուի մի ընդհանուր շրջաբերական, հանդերձ իւր տեղական կանոնագրով, ուղղել առ հայրենասէրս, և իւր այս նպատակ ի գլուխ հանելու համար, ի հարկին պատուիրակ մ'ալ ուղարկել իւր կողմանէ Eastի հայաշատ քաղաքներն այցելելու համար։ Այսպիսի բանի մը պէտք էր Արեւելքի Հայաշատ և կեդրոնի յարմար քաղաքներն ձեռնարկած լինէին և մենք նոցա հետեւէինք. և մեք բընաւ չեմք խորհիր թէ հոս, Շիքակո, Հայոց կեդրոն լինելու յարմար է, այլ ընդհակառակն ամենայն սիրով պատրաստ եմք ապագայ լինելու կեդրոնի հետ միանալ և նորա մէկ ճիւղը կոչուիլ։ Միութեան մի կարեւորութեան վերայ խօսիլ աւելորդ է և օգտակարութիւնն բացայայտ է և մենք վերջին օրերս փորձով տեսանք թէ, փո-

խանակ զատ զատ գործելու, միանալը և օտարներէն ալ իբր կեդրոն մը ճանչցուիլը, ո՞րչափ օգտակար և մեծ ոյժ մ'է։ Մենք կը հաւատանք նաև թէ այսպիսի միութիւն մը հնար է և թէ ժամանակը հասած է, զի ժողովուրդը ամեն ուրեք պատրաստ է և եթէ չկազմուի յանցաւորը առաջնորդները և զիրենք խելացի կարծողներն են։

Թո՛ղ մեր գաղափարք եկեղեցեաց մէջ լճացած մեր քոյրերու արեան մէջ ի մի ձուլուին։

Թո՛ղ մեր եսութիւնք Անոօքի և կէփէյի լերանցմէ հոսող մեր եղբարց արեան տեղի տան, և թո՛ղ մեր կուսակցական ձայներ Սասունի անմեղ մանկանց ձայներուն մէջ խեղդուին։

Հոս կազմուած է բնիկներէն American Agitation Associetion մարմին մը, որ անդամներ ունի ի Պոսթըն, ի Պալթիմոր, Նիւ Եորք, Ֆիլատէլֆիա և այլ քաղաքներ և իւր նպատակն է Հայկական Խնդիրը յուզել և ժողովրդին աչքին առջեւը վառ պահել։ Այս ընկերութիւն ինչ ինչ պատճառներով իւր գործունէութիւն չի հրատարակեր։ Մօտերս 5,000ի չափ նամակներ ղրկած է Ամերիկայի քաղաքներուն տարբեր կուսակցութիւններու, ընկերութիւններու, գլխներու և անհատներու, և բաւական տեղերէ գոհացուցիչ պատասխաններ և խոստումներ ընդունած է։ Ուրախ եմք յիշել թէ իբր իւր աշխատանաց արդիւնք Ուօշինկթըն ևս ճիւղ մի կազմուած է հարիւր պնդամներով, որոնց մէջ են, ի միջի այլոց, Միացեալ Նահանգաց Բ. Դատարանի անդամ ՊԸՐՈՒԸՐ, զօրավար ՊԷՑՐՏ, ճէնիրել Փոսթ Մէսթըր ՊԻՈՍԷԼ և բարձր եկեղեցականներ։

Հոս կայ նաև քաղաքիս կանանց գլխէն կազմուած ընկերութիւն մի և սկսած է գրել և ճիւղեր հաստատել և տարբեր քաղաքներու ու նահանգներու կանանց գլխները միացնել և յետոյ Եւրոպայի կանանց գլխները և այսպէս «Կանանց Միջազգային Գլխոյի» միջոցաւ Հայկական Խնդիրը Ամերիկայ և Եւրոպիոյ առաջարկել հայ կանանց վերայ գործադրուած բարբարոսութեանց վերջ տալու համար։

Քաղաքիս ազգային միութիւնը այս կազմութեանց հետ կը տեսակցի և երբեմն գաղափարներ կը փոխանակուին երկու կողմանէ։

Արդեօք չեմք ամաչե՞լ, Հայեր, երբ կը տեսնեմք օտարներ կը միանան մեր դատին համար և կ'աշխատին աշխարհներն ալ միացնել, իսկ մեք դեռ չեմք միացած։ Եթէ Սասունի կոտորածէն չեմք ազդուիր, գոնէ օտարներէն օրինակ առնեմք և միութեամբ գործեմք։

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎՈՑ
ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ՄԷԿԸ

ՆԱՄԱԿ ՖԻԼԱՏԷԼՖԻԱՑԷՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ Է

Վերջերս ազգայնոց մէջ տեսնուած եռանդոտ գործունէութիւն ու միաբանութեան ջանքն կը ցուցնեն թէ զգացած են վերջին կոտորածի ահագին կարեւորութիւնն Հայկական Խնդրոյն վերաբերութեամբ, և թէ գտած են այն թանկ պատեհութիւնն որ կը թուի վերջինն լինիլ Հայաստանի համար։ Քաջալերական է այս ջանք, բայց այս կերպով չի կրնար իրագործուիլ։ Գոհ լինելու տեղի չկայ ցորչափ սէրն ու շարժումն կազմաւորեալ չեն, այլ կը մնան քաոսական վիճակի մէջ։

Մեր գանգան ընկերակցութիւնք ի հարկէ ունին իրենց օգտակարութիւն, սակայն երբէք չեն կարող ակնկալուածին չափ բեղմնաւոր լինիլ առանձին գործունէութեամբ։ Ցիշենք թէ Հայոց նախկին բաժանեալ նախարարութիւններն ազգին կործանման պատճառներէն մին եղան։ Այսօր ալ մեր անմիաբան գործունէութիւն կրնայ ազգին համար անէծք լինիլ։

Մեր արդի զարգացման աստիճանին նայելով չեմ կարծեր թէ ուղիղ է ոմանց կարծիքն թէ միաբանելու համար բաւական հասուն չեմք դեռ։ Ես չեմ կարծեր թէ ազգային աշխատութեան այն կազմաւորեալ եղանակն զոր ՀԱՅԲ կը ջատագովէ ուժգնապէս, անգործնական է ներկայ հանգամանաց տակ։

Մեք որ դարերէ ի վեր քաղաքական գլխէ զրկուած եմք, և այժմ յանկարծ չեմք կրնար լիակատար անկախութիւն ձեռք բերել, կրնամք և պարտիմք մեր հայրենասիրական գործունէութիւնն հնար եղածին չափ ազգային կազմաւորեալ ձևի

տակ դնել, մեք մեզ ներքին կառավարութեամբ օժտել, լուրջ և վստահելի հայրենասէրներէ բաղկացած մի կեդրոնական վարիչ մարմին յօրինելով։

Մի՛ ասէք ու կրկնէք, սիրելի ազգայինք, թէ այդ չի լինիր, թէ Հայեր, հայ գործիչներ չեն միանար, և այդպիսի միութիւն խնդրել զուր աշխատանք է։ Դեռ մէկն չբացատրեց թէ ինչո՛ւ միութիւն չի կրնար իրագործուիլ։ Ես կը պնդեմ թէ կը լինի, եթէ կամենամք և ջանք ի գործ դնենք։ Եթէ հաճելի կ՚երեւի, թող Ամերիկայի հայերն յատուկ պատգամաւորութիւն մի առաքեն Եւրոպա կեդրոնի մի կազմաւորման աշխատելու պաշտօնով։ Ժամանա՛կ է, ժամանակն անգին է։ չարժի՛նք շուտ և գործե՛նք բոլոր ուժով։ «Ընենք նէ կըլլայ»։ Եւ պէտք է որ փութով ընենք։

ՀՍԿԱՑ

ՓՐՈՎԻՏԷՆՍԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ

Փետր. 2ին, Շաբաթ երեկոյ, ՀԱՅՐԻ խմբագիրն հրաւիրուած լինելով խօսիլ Փրովիտէնսի ազգայնոց, արտասովոր ընդհանուր ժողով մի կոչուած էր։ Ժողովն տեղի ունեցաւ ատենապետութեամբ Տ. ՍԱՐԿԱՒԱԳԵԱՆԻ։ Ազգային երգեր երգուեցան բազմութեան կողմէն, և մի սօլօ Տ. Սարկաւագեանէ, որ կիրթ երգիչ մ՚է։ Խօսեցաւ մի քանի վայրկեան Տ. Ատենապետի կրտսեր եղբայրն, և ապա Տ. ՄԵՍՐՈՊ ևս մի քանի խօսք աւելցուց։ Ապա ժողովոյ հիւրն ներկայացուեցաւ և խօսեցաւ իբր ժամ մի։ Նիւթն էր Սասնոյ կոտորածն։

Յետոյ ժողովն վիճաբանութեան նիւթ արաւ գործիչներու միութեան խնդիրն։ Տ. Մեսրոպ դիտել տուաւ թէ տեղական կուսակցութիւններն կամ ընկերութիւններն չպիտի յաջողին միանալ ցորչափ առաջնորդ գործիչք, խմբագիրք, կուսակցապետք միացած չլինին, զի տեղական հակառակութիւնք իրենց աղբիւր ունին այն բանին մէջ որ որ իւրաքանչիւր գաղթականութեան մէկ մասն այս ինչ և մէկ մասն այն ինչ գործիչի ետևէն կերթայ։

Ժողովն միաձայնութեամբ քուէարկեց գրել առ գործիչս և խնդրել որ ի մի վայր գալով կազմուին իբրեւ Յանձնախումբ։

Փրովիտէնսի Հայոց մէջ լուրջ և հասկացողանձինք չեն պակսիր, բայց տակաւին նոր կը սկսին հարկաւոր եռանդովն գործել որպէս ներկայ տարւոյ ահագին ճգնաժամն կը պահանջէ։

Մեր Փրովիտէնսի հայրենակցաց կը կը մաղթեմք արութիւն և յարատեւութիւն.

ԼԻՆԻ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՔ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ԽՆԴԻՐՆ ԵՒ «ՀԱՅՐ»

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Փետր. 3ի

Լինի Հայ երիտասարդութիւնն սկսած է նշանաւոր տեղ բռնել Ամերիկայի Հայոց մէջ։ Լրջմտութեան և միաբանութեան խմոր մ՚է նա բոլոր շրջակայ Հայոց համար։ Փետր. 3 կիրակի աւուր արտասովոր ժողովն, որ ՀԱՅՐԻ խմբագիրն լսելու համար յատկապէս կոչուած էր, յոյժ մըխիթարական երեւոյթ մի կը ներկայացնէր։ Անդ ոչ Հնչակեան կար և ոչ Լուսինեան, ոչ Լուսաւորչական և ոչ Բողոքական, ոչ Խարբերդցի և ոչ Տիարպէքիրցի, այլ միայն Հայ, մէկ հայրենեաց զաւակներ, որք հայրենասիրական եռանդեան ուժով մոռացութեան տուած էին երկրորդական տարբերութեանց փծուն հաշիւներն։

Այդ միշտ յիշելի ժողովոյ գալ փութացած էին նաև շրջակայ քաղաքներէն, Պոսթոնէն, Զէլսիէն, Մօլտընէն և սէյլամէն Հայեր և խմբագիրն բարեբաղդ եղաւ մի քանի ցրուած բարեկամներ վերստին տեսնելու։ Նարկայ էր նաև Տիկին Մարիա Հ. Օտին, նախագահ Եիունայթէտ Ֆըրէնտս ավ Արմէնիաի Լինի ճիւղին։ Ամերիկայի մէջ քիչ անգամ տեսնուած է այդքան խանխաւառ երիտասարդութիւն։

Տ. ԼԵՒՈՆԵԱՆ և ժողովոյն ատենապետն Տիար ՅԱԿՈԲԵԱՆ, ներկայացին զհիւրն հակիրճ ատենախօսութեամբք, և սա խօսեցաւ իբր 50 վայրկեան, Նիւթ ունենալով Սասնոյ կոտորածին վերայ խորհրդածութիւնք։

Ապա Տր. ՍԷՐԻՃԱՆ խօսք առնլով բացատրեց ՀԱՅՐ թերթի կարեւորութիւնն իբրեւ ազգային խորհրդոց բերանի։ Թերթին լեզուական հանգամանաց մասին եղած առարկութիւններն ջրեց, ցոյց տալով թէ պէտք է քիչ ուսած ազգայինք լեզուէն չխրտչին այլ աւելի ուշի ուշով կարդան և ընտիր հայերէնի ընտելանան, որովհետև թերթին լեզուն Արաբերէն չէ կամ Զիներէն, այլ բուն Հայերէն, և «չենք հասկանար» ասել պատիւ չի բերեր մերայնոց։ Հայերէն սովրիլն ալ հայրենասիրական պարտք մ'է։

Տ. Պ. ՑԱԿՈԲԵԱՆ, Պոսթոնէն, նոյնպէս պնդեց «Հայքին» ընդարձակ շրջաբերութիւն տալու պէտքին վերայ։ Որոնք որ 'առարկեն թէ ՀԱՅՐ սխալ գործեր է, պէտք է ցուցնեն թերթ մը որ անսխալական է, կամ հիմնեն այդ յատկութիւնն ունեցող լրագիր մը, եթէ կրնան։ Անկարելի բան է որ թերթ մը տարիներով հրատարակուի և ամեն իւր գաղափարներն համաձայնին ամեն Հայու գաղափարներուն. այդպիսի պահանջ անտեղի է։ Պարտին հայրենասէրք ազատամտութեամբ վարուիլ և ծաւալել ՀԱՅՐն։

Տ. ՎԱՐԴ. նոյնպէս Պոսթոնէն, ցոյց տուաւ թէ ինքն իբրեւ ծայրայեղ յեղաշրջման մէկն չի կրնար անպայման կերպիւ համակրիլ ՀԱՅՐԻՆ որ Հայաստանեայց եկեղեցին և Վարդանն կը ներկայացունէ և չափաւոր քաղաքականութեան դրօշ պարզած է։ Սակայն որովհետև ՀԱՅՐն ալ թշնամւոյն դէմ անկեղծօրէն զինուած այժ մ'է, ինքն ալ պարտանձին կը համարի բաժանորդ գրուիլ։ Այս իմաստն հրաբխային բորբոքով արտայայտեց Հնչակեանց նշանաւոր առաջնորդն և իբրեւ ազատամիտ միտման ծառայող ոք բուռն ծափահարութեան արժանացաւ։

Այնուհետև ժողովն անցաւ այն դնդրոյ վիճաբանութեան թէ արդեօք պէ՞տք էր հրաւէր կարդալ մեր ծանօթ գործիչներուն յեւրոպա որ միանան ի մի Ցանձնախումբ։ Մի քանիներ հակիրճ ատենախօսութիւններով բացատրեցին այնպիսի Միութեան մի պէտքն ու հնարաւորութիւնն ճիշդ այս միջոցիս, և միաձայնութեամբ քուէարկեց ժողովն որ Տ. Տ. Զերաբի, Ցակոբեանի, Թումայեանի, Հնչակի, Դրօշակի և Արմէնիոյ ծանուցանեն այս որոշում։ Ապա քուէարկութեամբ ընտրեցին յանձնաժողով մի որ ժողովոյ կողմանէ վերոյիշեալոց գրէ յանուն ժողովոյն։

ՆԱՄԱԿ Ի ՊՈԼԻԿԱՐՊՈՍ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վառնայի Հայ հասարակութիւնը և մօտ ժամանակ Հայաստանէ գաղթած Հայեր, թուով իբր 2,500 անձինք, հաւաքուելով 20 Յունվար 1895 քաղաքին եկեղեցւոյն շրջափակին մէջ ընդ նախագահութեամբ Արժ. Տէր ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ Հօր մասնաւոր միթինկ մը կազմեր և որոշումներ քուէարկեր են։ Ահաւասիկ մեզ հաղորդուած արձանագրութեան էական մասն.—

Նկատելով որ ընդհանրապէս Հայաստան դրկուած ու նոյն իսկ խառն տարրերէ բաղկացեալ յանձնաժողովներն ուրիշ արդիւնք մ'ունեցած չեն, բայց եթէ յաւելաքօղարկել գործուած չարագործութիւններն և թէ մանաւանդ լոկ թուրք-մահմետական պաշտօնեաներէ բաղկացեալ այս Ցանձնաժողովն նոյն իսկ պարզապէս համերաշխութեան ոգւով չպիտի ուզէ մերկապարանոց անել նոյնպէս թուրք-մահմետական պաշտօնէից գործած ոճիրները։

Նկատելով որ այնպիսի երկրի մէջ ուր կառավարական տարսափը կը տիրէ և ուր ոճիրք կը գործուին նոյն իսկ կառավարական պաշտօնէից ձեռամբ և հրամանաւ ինչպէս է Սասունի կոտորածը զօրապետ Զէքի փաշայի ձեռամբ, ցնորք մ'է կարծել թէ կարելի պիտի ըլլայ քննութիւններով երևան հանել չարագործները, որք կամ կառավարութեան պաշտօնեաներ են, կամ անոր վարձեալներն և որոց յաջորդներն։ Ենթադրելով իսկ որ յանցաւորները պատժուին, յետոյ անվրէպ և անգթօրէն քաւել պիտի տան վկայից իրենց ազատախօսութեան և անկեղծութեան ոճիրը, ինչպէս պատահած է Մուսա Պէյի դատէն յետոյ և այլ պարագայից մէջ։

Նկատելով որ այսպիսի հանգամանաց մէջ քննիչ Ցանձնաժողով մ'եղեռնական հեղնութիւն մ'է և թէ Տէրութեանց Պատ. պատուիրակները իրենց պաշտօնին բերմամբն իսկ քննութեան ձևերուն կանոնաւորութեանը միայն հսկելով՝ պարզապէս պիտի ծառայեն վաւերականութեան դրօշմ մը տալու այն նենգամիտ կատակերգութեան զոր Բ. Դուռն կը խաղայ զոհերու և դահիճներուն դէմ Եւրոպայի և

Ամերիկայի քրիստոնեայ ժողովրդոց զգացած ազնիւ զայրոյթը հանդարտեցնելու համար։

Միթինկը կ'որոշէ,

Զայն բարձրացնել և բողոքել առ Տէրութիւնս Եւրոպայի և Ամերիկայի Միացեալ Նահանգաց ընդդէմ Բ. Դրան այս եղեռնական նենգամտութեան։ Եւ ազաչել վերոյիշեալ Տէրութեանց որ առանց ա'և է ձեւակերպութեան պահանջեն հարկաւոր բարենորոգմանց անյապաղ գործադրութիւնը, որպէս նախատեսուած է 61. յօդուածին մէջ, որ միակ միջոցն է Հայոց կեանքը, պաշտպանը և ստացուածքը ապահովելու Բ. Դրան Մաքիաւէլեան քաղաքականութեան դէմ։

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՔ

ԲԱԼՈՒԱՑ ԿՈՂՄԻՐՆ

Խմբագիր ՀԱՅՐԻ,

Բալուի գործերը մօտը, այսինքն 4 ժամ հեռաւորութեամբ, Պաղին գիւղը գալով բռնի ուզած են 40 ջորի զինուորական պաշարի փոխադրութեան ծառայեցնելու, բայց Պաղինի քանի մը առաջնակարգ անձինք խնդրանօք և կաչառք տալով համոզեր են զօրքերը որ 40ի տեղ 16 ջորիով շատանան։ Ջորիներն և 14 Հայեր իբրեւ ջորեպան առնելով բռնութեամբ Բալու կը տարուին։ Բալուի մէջ իրենց կ'ըսեն Հայեր թէ դուք Մշոյ և Սասնոյ վերայ ղրկուելիք զօրաց պաշարը պիտի փոխադրէք ու զօրքերն ալ պիտի կռուին ընդդէմ Հայոց, ուրեմն ջորիներնիդ ձգել ու փախչելու մէկ ճարը գտէք։ Ջորեպան Հայերը տարտափած և շուարած կը մնան, բայց ի՞նչ օգուտ քանի որ իրենք պահպանութեան տակ առնուած են։ Վերջապէս զօրաց հետ կը ճամբորդեն մինչեւ Խոչմաթ։ Գիշերը գիւղին մէջ ջորեպանաց չորսը իրենց ջորիները առած կը յաջողին խոյս տալ, իսկ մնացեալ 10 մարդիկ և 12 ջորիները մինչև Մշոյ կողմերը բռնութեամբ և անպատմելի ծեծի ու նեղութեան ենթարկուած՝ տարապարհակ կը վարուին։ Հայ ջորեպանաց երկուսը այդ անտանելի ճանապարհորդութեան մէջ կը սպանուին, այսինքն Օսկիհան Տէրտէրեան և Ղուկաս Մահտեսի Դաւիթեան։ Իսկ միւսները հազիւ հազ հիւանդ ու նիհար վիճակի մը մէջ կը հասնին դարձեալ իրենց ծննդավայրը Պաղին։ Ասկէ կրնայ ենթադրուիլ թէ Հայաստանի ամեն մի անկիւնի մէջ Թուրքի գաղանավարութիւնը կը թագաւորէ որուն հետեւանքը անշուշտ Թուրք կառավարութեան մի երկրորդ մեծ կորուստ է։ Հայը այլ ևս զգացած է իւր ունեցած դարաւոր վէրքերը և իւր ուխտած Սբ. արիւնով միայն պիտի յաջողի Աստուծոյ յաջողութեամբ դարմանել իւր մշտական մինչ ցայսօր շարունակուած հարստահարութիւններն, կոտորածներն, անարդարութիւններն։ Միայն մենք Հայերս միութեամբ մէկ մարմին լինելով մէկ նպատակի համար ջանանք և քաջայոյս լինիմք թէ ապագայ յաղթանակը մերն է, վասն զի արդարացի է մեր պահանջ։ Գործեմք և ջանամք մինչև ի կատարումն և ի լրումն մեր Սբ. Նպատակի։

Ն. Ճ.

ԱՑԼ ԵՒ ԱՑԼԻՔ

ԹՈՒՐՔԻՈՑ ԲԱՇԽՈՒՄՆ.— «Սփիքըրիկ» Կ. Պոլսեան թղթակիցն կը գրէ թէ Սուլթանն իրազեկ է որ Եւրոպեան պետական որեարն կը քննեն զեւրոպական Թուրքիան և զԿ. Պոլիս բաշխելու խնդիրը։ Նա իրազեկ է նոյնպէս թէ վերստին արթնցած է այն խնդիրն թէ Մակեդոնիոյ և Թրակէի ո՛ր բաժինն Պուլկարիոյ պէտք է տրուի, Ալպանիոյ ո՛ր մասն Սերպիոյ և ո՛ր մասն Յունաստանի։ Այս ծրագրի համեմատ, պայթման նշանն Մակեդոնիոյ մէջ պիտի տրուի՝ Քրստոնէից տաքի ելնելովն։

Քսիմէնէսի անյաջողութիւնն.—Լ. Տէյլի Նիւզի կը գրեն թէ, Կ. Պոլսէն եկած տեղեկութեանց համեմատ, Սպանիացի ուղեւորն, որ անցեալ օր ուրացաւ Սասնոյ ջարդն, և որ Սուլթանին ոչ-պաշտօնական գործակատարն էր ի Լոնտոն, հեռագրած է թէ Անգլեհայկական Ընկերութեան գործակիր ժողովոյն հետ համաձայնութիւն գոյացուցելու անկարող եղած է։

Ուրիշ վայրագութեանց տեղեկագիրք այժմ առ ձեռն են ի Կ. Պոլիս, կը գրէ Տ. Նիւզի թղթակիցն օսմ. մայրաքաղաքէն։ 1893 Դեկտեմբերին, տեղական իշխանու-

թիւնք Եօզղատի մէջ ձերբակալեցին 400 Հայեր, և քիչ յետոյ մահմետականք խուժելով շուկային վերայ՝ զարկին, ծեծեցին և սպաննեցին Հայերն։ Հայերէն անոնք որ գրաւոր բողոք մատուցին, բանտարկուեցան, և անոնցմէ 40 հոգի դեռ ի բանտի են։ Բազում Հայեր վերջերս բանտ նետուած են գրաքննութեան կնիքն չկրող Աստուածաշունչ ունենալու յանցանքով։

Պէռլին Փետր. 5, 1895.— լուր եկաւ թէ Թրապիզոնի Թուրք ամբոխն քաղաքին Քրիստոնեաներն գիշերային ջարդելու միտք յղացեր է վերջերս, սակայն թրքական պահապան զօրաց հրամանատարն կանխաւ իրազեկ լինելով՝ ազդու միջոցներ ձեռք առաւ և խափանեց ծրագրի իրագործումըն։

Լոնտոն Փետր. 5— Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Սիդոնի, Պէյրութի և Դամասկոսի կողմերն Հայաստանի մէջ կատարուածին տեսակէն գազանութիւններ սկըսեր են գործուիլ Քրիստոնէից վերայ։

Լոնտոն Փետր. 7— Տ. Նիւզի թղթակիցն կը հեռագրէ Կ. Պոլսէն։ Սուլթանն հրամայեր է իշխան Ա. Գարաթէոտորի պատրաստել Հայաստանի համար բարեկարգութեանց ծրագիր մի։ Ծրագիրն մատուցուեցաւ Նմին վեհափառութեան, որ անկատար նկատելով զայն՝ հըրահանգ տուաւ որքան հնար է վերջնական անել զայն։ Սուլթանին առաջին քարտուղար Սուրէյա Փաշան որ յանկարծամահ եղաւ անցեալներ, Փատիշահի խիստ կշտամբանքէն շանթահար եղած է կասեն, անոր համար որ իւր վեհապետին առ Զէքի փաշա հրամանն չափազանց արտօրնօք հաղորդած է Սասունն զարնելու։

Լոնտոն Փետր. 8— Կ. Պոլսէն հեռագիր մի կ'ասէ թէ Թուրք պաշտօնեայք ձերբակալեցին Իզմիտի Ֆռանսական Կաթոլիկ Եղբայրութեան Աբբան դոյզն յանցանքի մի համար։ Բ. Դուռն թողութիւն խնդրեց Ֆռանսական դեսպանին պահանջմամբն, սակայն անկէ անդին բան մի անել չուզեց։ Ասոր վերայ Ֆռանսացիք Բէդռէլ նաւն յղեցին յԻզմիտ, ուր նաւաստիք ելան և զԱբբայն ազատեցին։

Լոնտոն, Փետր. 7— Տիար Շուան այսօր Խորհրդարանին մէջ խնդրեց 1890 էն մինչև 1894՝ Հայաստանէն յղուած հիւպատոսական տեղեկագիրներն։ Արտաքին Գործոց Նախարարութեան Խորհրդարանական քարտուղարն չուզեց հրապարակ հանել զայնս։ «Արդեօք տեղեկագիրք այնքան սոսկալի են որ հրատարակուելու անյարմա՞ր կերեւին,» հարցաւ Տիար Շուան։ «Ո՛չ, պատասխանեց Սըր Է. Կրէյ, սակայն Սասնոյ անցից նկատմամբ ստացուած տեղեկագիրք շատ աւելի ծանր են քան յառաջագոյն տրւած ամեն տեղեկագրութիւն։»

Կ. Պոլիս, Փետր. 8— Մշոյ տեղական պաշտօնեայք խոչնդոտ հանած են օտար պատուիրակաց դէմ որք հայկական խըժդժութեանց վկաներն հարցաքննել կ'ուզեն։ Ուստի և պատուիրակաց յղիչ դեսպանութիւնք բողոքած են Բ. Դրան, պնդելով թէ հարցփորձք պարտին անարգել կատարուիլ։ Սըր Ֆ. Քըրի նոր ծանուցագրով մի կ'ուզէ որ Լրագրական թղթակցաց թոյլ տրուի ուղեւորութիւններ անել Փոքր Ասիոյ ամեն գաւառներում, բաց ի Բաղէշէն։ Այս վերջինս, սակայն, պէտք է բացուի թղթակցաց առջեւ երբ Յանձնաժողովն աւարտէ իւր նիստերն ի Մուշ։

Լ. «Սփէքթէյթըր» կ'ասէ թէ Սուլթանն ստէպ փափաք կը յայտնէ որ քըննութիւնն լիովին և անկողմնակալ կերպով կատարուի, և անոր ամեն միջոց ձեռք կ'առնու կատարեալ և խորին քըննութիւնն անկարելի գործելու համար։

Լոնտոն, Փետր. 9— Թղթակից մի որ ի Կ. Պոլիս ծնած ու մեծցած էր, յաջողած է կառավարութեան լրտեսներէն խուսափիլ և երթալ ի Հայաստան։ Կ. Պոլսէ մեկնելէն առաջ տեսակցութիւն մ'ունեցեր է Մեծ Եպարքոսին հետ, որ բողոքեր է Հայաստանի խժդժութեանց մասին դառյթ հանողներուն դէմ։ «Հայաստանի մէջ խըռովութիւնք միշտ կը պատահին ասեր է։ եթէ կոտորած տեղի ունեցած է, շատ ժամանակ անցած է անկէ ի վեր, և երկիրըն ձիւնով ծածկուած լինելով ուղեւորութիւնն յոյժ դժուար է և անօգուտ իսկ։ Բովանդակ դէպքն անցած գնացած է, և անոր նկատմամբ հետաքրքրութիւն չէ մնացեր։»

«Ձեր Բարձրութիւնն կը սխալի,» դիտեց թղթակիցն, «այս դէպքի մասին հետաքրքրութիւնն դադրած չէ, այլ նոր

կը սկսի արթննալ։»

«Բարո՛ւք,» կը պատասխանէ Եպարքոսը, «մեք վախնալու բանիկ չունիմք։ Այն գրոյցներն որ դուք լսեր էք, բոլորն ալ սուտ են, սակայն ոչ մէկ թղթակցի հրաման պիտի տրուի երթալ հոն, և ոչ ոք կը յանդգնի մտնել անհրաման։»

Լոնտոն, Փետր. 10— Տէյլի Կրէֆիքին կը հեռագրեն Կ. Պոլսէ թէ Թագուհւոյն ճառն որ Հայաստանի մասին ալ կը խօսի, և Լորտ Ռոզպէրիի ևս ակնարկութիւնն ի նոյն խնդիր՝ խորին տպաւորութիւն գործեր են յարքունիս։ Տէյլի Նիւզի կը հեռագրեն թէ պահեստի զօրաց մէկ մասն ծառայութեան կոչուած է։ Ասոր իբրեւ պատճառ ոմանք կը գրուցեն թէ Ռուսիա զօրք կուտած է սահմանագլխին վերայ, և այլք՝ թէ Մոնասթիրի և Մակեդոնիոյ յուզմանց համար է։ Բովանդակ կայսրութեան մէջ հրաման ելած է որ օտար կամ բնիկ ոևէ անձ չշարժի իւր տեղէն առանց յատուկ հրամանի։ Տէյլի Թելեկրաֆին կը հեռագրեն թէ Թրքերն մեծ ջանքեր թափած են Ցանձնաժողովին ներկայացող վկաներն կաշառելու, բայց ի զուր։ Տէյլի Քրոնիքլի կը հեռագրեն Հռովմէն թէ Ս. Պապն ի պատասխանի Սուլթանին կոչման որ միջնորդէ Հայկական խնդրոյն համար, մերժեր է միջնորդել, թելադրելով հանդերձ որ քրիստոնեայ կառավարիչներ կարգէ ուր որ քրիստոնեայք բազմաթիւ են։

Յունվ. 29ին, Հայկական խնդրոյն համար Անգլիոյ Մանչէսթրը քաղաքին մէջ միթինկ մի տեղի ունեցած է ընդ նախագահութեամբ քաղաքապետին, ուր ամեն դասանքի և կուսակցութեան ներկայացուցիչ անձինք ներկայ են գտնուած։ Տեարք ՀՈԼԱՆՏ, ՇՈՒԱՆ, ՔԷՆԸՆ ՀԻՒՍ, և այլք, կ'ասէ «Մանչէսթրը Կարտիյրն» այն հայեացքն ունեցան թէ տեղեկագրուած գազանութեանց իրականութիւնն անվիճելի կերպով հաստատուած է։

Լոնտոն Փետր. 12— Սթանտարտի կը հեռագրեն Կ. Պոլսէն թէ պատերազմական նախարարն հրամայած է բաշխել երեք զօրաբաժիններու այն Մաւզէր հրացաններն որք մի քանի տարիներէ ի վեր մնթերուած կը մնային։

Տէյլի Նիւզ վաղն հեռագիր մի պիտի հրատարակէ Կ. Պոլսէն ծանուցանող թէ օտար դեսպանաց ժողովի մի մէջ որոշում եղած է ծանուցագրով մի իմաց տալ Դրան այն մտահոգութիւնն զոր կը զգան օտարականք՝ հետևանօք նորագործ ոճիրներու և այլ բռնութեանց փողոցներուն մէջ, և խնդրել որ իշխանութիւնք միջոցներ ձեռք առնուն ի լաւագոյն ապահովութիւն կենաց և ստացուածոց։

«Լէ Նուվէլ ա'Օրիան»ի կը գրեն Կ. Պոլսէն թէ քաղաքապետութեան սնտուկէն 80,000 լիրա, կայսերական հրամանաւ զոհուած են պալատի պիտոյից։ Ալ ինչո՞ւ զարմանամք եթէ խճուղիներ խարխային, նկուղներ ախտ բուրեն և թըշուառք թողուին իրենց սեաւ բաղդին։

«Լ. Սփիքըրն» յօդուածի մի մէջ ակնարկելով Սուլթանի հրամանին առ իշխան Ա. Քարաթէոտորի ի ծրագրել Հայաստանի մէջ մտցուելու բարեկարգութիւններն, կը յիշեցունէ թէ նոյնպիսի ընթացք բռնեցին ռուսընդդիմուրք պատերազմի ճգնաժամի ատեն Միհրաթ փաշայի ձեռքով ձեւուած Սահմանադրութեան դէպքին մէջ։ Այդ Սահմանադրութիւն իբրեւ ապացոյց Դրան ազատականութեան՝ կեցցէի աղաղակներով ընդունեցին Թրքաստէրք, սակայն շուտով բարձի թողի եղաւ Միհրատի գլխուն եկած փորձանքէն յետոյ, որ աքսորի մէջ գտաւ իւր մահ։

140 Հայեր որք անցեալներ յԱմասիա ձերբակալուած էին այն կասկածով թէ Ղուրանի օրինակ մի սրբապղծած էին զայն նետելով ի կայանոց, չորեքօրեայ բանտարկութենէ մի վերջ արձակուած են, հաստատուած լինելով թէ Միւսիւլման սոֆթաներ էին այդ յանցանք գործողներն։

Ն. Եորքի «Լոթամիս թերթն» Փետր. 6ին կ'արտատպէ ինչ որ իւր Բարիզեան չարաշուք ոտուերն հրատարակած է։ Ահա համառօտութիւնն։ «Սուլթանն Ս. Պապին կոչում արեր է միջամտել ի նպաստ իւր Եւրոպիոյ տէրութեանց քով՝ հայկական վայրենութեանց խնդրոյն վերաբերութեամբ։ Իսլամաց Պետին այս դիմումն առ Պետն Քրիստոնեայ աշխարհին՝ պայծառ ապացոյց մ'է թէ Սուլթանին կարծեօք հոս կրօնական խնդիր չկայ, որոհետեւ ծաղրելի պիտի լինէր երևակայել թէ քրիստոնեաներն հարստահարած լինելու խղճահարութիւնն զգացող միւսիւլման մի

կը դիմէ առ բարձրագոյնն քրիստոնեայ դատարանաց։»

Նոյն «Չարալուր Թերթն» նոյն թուոյն մէջ կը հրատարակէ հետեւեալ ապուշ հեռագիրն Կ. Պոլսէն. «Երկու կողմն ալ յայտնապէս անիրաւութիւն են գործեր։ Թուրքքն բարեսիրտ արարած մ'է, հիւրասէր, և Ասիոյ բոլոր ազգութեանց քան զամենայն արժանահաւան։ Հայք չատ նուազ վստահելի են։ Նոցա ուշիմութիւնն չափազանցուած է, ինչպէս յայտ է այն իրողութենէն որ Նոքա իբրեւ ազգ չեն յաջողած Թրքերէն Պարսկերէն կամ Արաբերէն ուսանիլ։ Նոքա երբէք կորովոյ և ինքնավարութեան հարկաւոր բարեմասնութեանց ապացոյց տուած չեն։»

Նոյն «Զարախնդիր Թերթն» նոյն թիւն պղծած է իւր թղթակցի հետեւեալ անմիտ հեռագրովն ևս ի Հռովմէ. «Հոս հայ Հռովմէական գոլէճ մի հաստատուած է 1883ին, որոյ տեսուչն, զՀայր Յովսէփ Մելքիսեդեկեան տեսնել գնացի։ Ս. Հայրն երբ իմացաւ իմ այցելութեան նպատակն, ասաց, Հոս 21 ուսանող ունիմք, երկու ուսուցիչներ և ես. բայց մինչև այսօր ոչ մէկս ոևէ լուր առած եմք մեր Հայրենակիցներէն նկատմամբ հայկական անցքերուն, թէպէտ Մշէն ալ ունիմք աշակերտ մի։ Ասկէ զատ ահա հայերէն ԱՐԵՒԵԼՔ լրագիրն, որ Կ. Պոլիս կը հրատարակուի, և ամենեւին այդ խժդժութեանց մասին լուր չի պարունակեր։ Շատ ժամանակ չը կայ որ ես Հայաստան էի, և կրնամ ասել թէ չեմ կարծեր թէ իմ հայրենիքս կրնայ ո և է կերպով գանգատիլ իրեն եղած վարմունքին դէմ։ Սուլթանն ուշիմ և բարեսիրտ վեհապետ մ'է, որ իւր ամեն ազգի հպատակաց բարօրութիւնն իւր հոգածութեան մեծ առարկայն արած է։ Հայ կաթոլիկներն, թուով 150,000, չեն կրնար անշուշտ յանցանք գտնել։ Նոքա միշտ պաշտպանութիւն և օգնութիւն ունեցած են։»

Տ. ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ նամակ մի յղեց Ն. Ե.ի ծանօթ «Մրագրին՝» յանդիմանելու համար զԱ. Անտոնեան որ ապշեցուցիչ յամառութեամբ կը շարունակէ անաչառ հռչակել այդ անպիտան թերթն։ Ստասէր Լրագիրն չհրատարակեց այդ նամակ, ինչպէս իւր սովորութիւնն է մերժել ամեն լուրջ գրութիւն Հայոց դատին վերաբերութեամբ։

«Ն. Ե. Թրիպիւնի» բարեհաճութեան կը պարտիմք Կլոստոնի պատկերն զոր կը գտնեն ընթերցողք արտատպեալ Հայքի ներկայ թուոյն մէջ։

Ն. Ե. «Թրիպիւնի» մէջ կը կարդամք

Տէր.— Բոլիէն Տիկին Փափազեանի մօրմէն նամակ մ'եմ ստացած որ կը տեղեկացունէ թէ սխալ է բոլորովին այն լուրն թէ Հայաստանի բոլոր գոլէճները փակուած են և 35 ուսուցիչներն բանտարկուած։ Ո և է մարդ որ այսպիսի սուտ լուրեր կը յօրինէ պէտք է դատի կոչուի ըստ տրամադրութեան օրինաց։

ՄԻՐՍ. Ա. ՓՐՕՖԹՕՐ

Տուկլաս, Մաս. Յունվ. 28, 1895

Փեղերսպուրկէն կը հեռագրեն թէ Զարն Հայոց կաթողիկոսին հասկացունել տուած է թէ չպիտի ընդունի զինքն։ Ս. Կաթողիկոսն, որ ճանապարհ ելած էր դէպի մայրաքաղաքն, ետ դարձեր է հետեւապէս։

ՄՇԱԿի մէջ հետեւեալն կը կարդամք —Կիրակի օր, Յունուարի 8ին, Վեհափառ Կաթողիկոսը Վանքի մայր եկեղեցում քարոզ խօսեց։ ... Քարոզի նիւթը որ վերաբերում էր օրվայ հարցերին, լաւ սրպաւորութիւն թողեց ունկնդիր հասարակութեան վրա։

ԱՂԱՂԱԿ ՀԱՅԱՍՏԱՆի է անունն այն անգլիերէն հաւաքածոյին որ Հայկական Խնդրոյն վերայ ի լոյս ընծայուեցաւ այս օրերս յԱնգլիա։ Տետրակն կը բաղկանայ 41 երեսներէ, և կը պարունակէ նամակներ, Կլատսթոնի ատենախօսութիւնն ուղղեալ առ հայ պատգամաւորս՝ ծննդեան տարեդարձի օրն, և լրագրական յօդուածներ։

Խմբագրութեանս մէջ շնորհակալութեամբ ընդունուած է նաև անգլիերէն գիրք մի, SLAV & MOSLEM, հեղինակութիւն J. Milliken Napier Brodheadի։ Այս գիրքն Ռուսաց և Թրքաց վերայ ընտիր ուսումնասիրութիւն մ'է՝ կարդացուելու արժանի։

Պոսթոնէն կը գրեն մեզ.—

Նշանաւոր միթինկ մ'ալ տեղի ունեցաւ հոս Թրքաց դէմ բողոքելու։ Ամենապատուական տեսակէն ատենախօսու-

թիւններ որին հաշուակալն Տիկին Հաու, Պատ. Կորտըն և Պատ. Լէնսինկ, և յետոյ որոշումներ քուէարկուեցան խնդրելու Ուաշինկթընի կառավարութենէն որ յանուն մարդկային եղբայրութեան ազդեցութիւն գործածէ Եւրոպիոյ Տէրութեանց վերայ յօգուտ Հայաստանի: Պատ. Կորտըն գուշակեց թէ Թրքաց օգուտ չունի քարոզն, և թէ հիմակու հիմա ամենէն աղէկ միսիոնարներն մահմետականներն պէտք է լինին Թուրքիոյ համար: Պատ. Լէնսինկ ևս ըսաւ «ես չեմ հաւատար թէ մեր գործաւորները ինչ բանի կուգան եթէ անոնցմէ երկուքն Պոսֆորի ջրերն չեն ուղարկուիր այս միջոցիս:»

Բարիզէն, 10 տոլար նուէր յղելով «Հայքի» հրատարակութեան ի նպաստ, կը գրէ Տիար Յ. Իսկէնտէր.

Մեծաւ ուրախութեամբ լսեցի թէ որոշած էք շարունակել պատուական «Հայքի» հրատարակութիւնը: Ուրախալի է միշտ գիտնալ թէ ազգօգուտ թերթդ գնահատողներ կան կամ կը գտնուին հոս և այլուր, և յօժարակամ աջակցողներ, որպէսզի չդադարի այդ կարեւոր և լուրջ բերան ազգային:

Օնթարիոյէն կը գրէ մեզ Տիար Պ.

Չորս տարի է որ ՀԱՅՔին բաժանորդ գրուած եմ և միշտ սիրած եմ և ուրիշներն ալ յորդորած եմ որ բաժանորդ գրուին: Ըստ իս «Հայքը» նորութիւն մ'է հայ լրագրութեան մէջ իր լուսաւորեալ, լայն ու արդարասէր գաղափարներովը:

Խարբերդէն կը գրեն մենէ մէկուն,— Հոս բոլոր Հայերս վերջին աստիճան նեղուած ենք. ամեն օր տուներու մէջ խուզարկութիւններ կ'ըլլան: Ժամ 1էն ետև մարդ չի համարձակիր տնէն դուրս ելնելու:

Եդեսիայէն կը գրեն մենէ մէկուն.— Թուրք կիներ, չորամիտ մոլեռանդներէ խրատուած, Ս. Սարգիս վանքը գնացին և հայհոյանք ու լուտանք տեղացին Գեր. Հայր Խորէն եպիսկոպոս Մխիթարեանի երեսին, բայց Ս. Առաջնորդը մուռ արաւ, և առ ի զգուշութիւն իւր բնակութիւն հաստատեց ի քաղաքի, հասարակ տան մի մէջ:

Թուրքիոյ մէկ քաղաքէն կը գրէ մեզ ոմն.— Թուրք կառավարութիւնն առանց պատճառի զիս բանտարկել փորձեց, բայց շնորհիւ ամերիկայի քաղաքացութեանս՝ չյաջողեցաւ:

Ուօքիկընէն կը գրեն մեզ—

Մեր հայրենակիցները տակաւին անփորձ են ստակը պահելու մասին: Ոմանք ծոցերնին կը պահեն, կարծելով թէ ծոցէն աւելի ապահով տեղ չկայ, և ասանկներու ստակ երբեմն կը գողցուի: Ոմանք պանքան կը դնեն, բայց առանց հասկցած ըլլալու թէ ինչ են պայմանները: Պայմաններն նոյն չեն ամեն պանքայի համար. ոմանք շահ կուտան, ոմանք չեն տար. կան որ ուզած ատեն տա կուտան, կան ալ որ այսչափ օր առաջ ծանուցում անելդ կուզեն: Ուրեմն լաւ կ'ընեն մեր հայրենակիցք եթէ գիտցող և փորձառու ընկերէ խրատ ուզեն և ըստ այնմ իրենց ճակտի քրտինքին արդիւնքն պահեն ամենէն ապահով և շահաւոր կերպով:

Հ.

Թղթակից մի մեզ կը հարցնէ թէ մաս-միթինկ կազմելու ժամանակն եթէ անցած չէ, իրենք ևս կ'ուզեն ունենալ զայրացման ժողով մի: Կը պատասխանեմք թէ ժամանակն անցած չէ, այլ մանաւանդ հիմա է ժամանակն, քանի որ երկբայութիւններն փարատելու կարող ստոյգ տեղեկագրութիւններ հասած են Սասնոյ կոտորածին նկատմամբ: Պէտք է շարունակել անդադար մաս-միթինկները.

Արժ. Տէր ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐՈՒՆԵԱՆ, Փետր. 10ին, կիրակի օրն յետ միջաւուր, ի յիշատակ Սասնոյ նահատակաց պաշտօն կատարեց ի Ս. Ոսկեբերան մատրան, ի Նիւ Եորք: Հայր Սուրբն իւր հայերէն քարոզ ընդմիջեց Անգլիերէն մասով մի, ի հասկացողութիւն ամերիկացի հիւրերու: Եկեղեցին լի էր երկսեռ բազմութեամբ: Ցընթացս քարոզին յայտարարեց թէ Ուստըրի Ս. Փրկիչ եկեղեցւոյ կառուցման ծախքէն դեռ 3,700 տոլարի բաց մի կը մնայ, և կոչում արաւ ժողովրդեան օգնել այդ պարտքի վճարման: Նաև Վեհ. Հայրապետին օրհնութեան նոր կոնդակն կարդացուեցաւ:

Փետր. 24ի կիրակի օրն, երեկոյեան ժամ 7ու կէսին, մաս-միթինկ մի պիտի

լինի Տր. Պէքըսի եկեղեցւոյն մէջ, 9դ Է-վինիւ և 28դ փողոցի անկիւնն: Պիտի ա-տենախօսեն Պատ. Ալֆրէտ Ուիթմայէր, Գնդապետ Պէյքըն (այն որ միանգամ խօ-սած է արդէն առաջին մաս միթինկին մէջ) Տր. Պէքըս և Տր. Մ. Ս. Գաբրիէլեան: Այս ժողովին կը հրաւիրուին բոլոր Հայերն և կը խնդրուի որ իրենց Ամերիկացի ծանօթ-ներն ալ հրաւիրեն կամ բերեն ի միասին:

Յունվ. 27ի Շաբաթ երեկոյ, ՀԱՅՔի խմբագիրն բանախօսեց Հ. Ե. Ք. Ընկերակ-ցութեան Ֆռանսական բաժնին առջեւ, նիւթ ունենալով «գինի և առողջութիւն:»

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգինն է 5 տոլար հասցէն է "Խմբագրութիւն Մշակի"(MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա: ԱՐՁԱԳԱՆՔԻ եւ պայմանն ու հասցէն նոյն է:

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՈՑ բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ. Հասցէն է—
33 De vere Gardens W, LONDON, ENG.

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ և ԲԱԶՄԱՎԷՊ: Տարե-կան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար:

ԲԱԶՄԱՎԷՊի հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE
ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅի հասցէն է,
Redaction du HANTES,
Convent Mechihariste.
VIENNE, AUTRICHE

«Հայքի» նախորդ տարիներն կը վա-ճառուին հետեւեալ գներով.
Ա. տարի, 1 տոլար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. ,, 2 ,, կամ 10 ֆրանք:
Գ. ,, 2 ,, ,, ,, ,,

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ
Յանձնակատար-գործակալ
ամեն տեսակ
Գրական և տպագրական արտադրութեանց
և ն. և ն.
Հաստատեալ 1890 ի Ռուսճուք

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. **$3** a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, **25** cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, **361** BROADWAY.

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
5 և 7 E. 10դ Փողոց
5դ Էվինիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-սակ գրքեր.

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK.
ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՌԱՆՍԱԿԱՆ
ՃԱՇԱԿԱՒ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

Բաւական թուով Պոլսոյ շէնքերու ֆօթօկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30 սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ գնով գրել հետեւեալ հասցէին.
H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան․ լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Աստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

«ՄԱՐԶԱՐԱՆ», պատկերազարդ կրթութեան, բազում ձևերով լուսաւորեալ․ աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան․ Տպարան Մ․ Ս․ Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած․ գրեաց Մ․ Ս․ Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր․

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ․ Ս․ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգին ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։
Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ․ Ս․ Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ․ Ս․ Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 189[illegible], գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ․ Ս․ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ